Սրահեր

ISSN 2579-2571

Մանկական քրիստոնեական ամսագիր

6+

6/2021

ՄԱՐԴ ԵՎ ԱՍՏՎԱԾ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

էջ 3

ՀՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԸ

էջ 8

Ի՞ՆՉ Է ՍՈՒՐԲ ԾԼՈՒՆԴԸ

էջ 18

ՍՈՒՊԵՐՀԵՐՈՍԸ

Անցի՛ր լաբիրինթոսը, հավաքի՛ր տառերը և իմացի՛ր ամսագրի այս համարի թեման:





ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

- Անունը. Հիսուս (նշանակությունը՝ «Յահվեն փրկում է»)
- Տիտղոսները և այլ անունները. Քրիստոս, Մեսիա, Աստծո Որդի, Մարդու Որդի, Փրկիչ, Էմմանուել, Գառ
- Ծննդյան տարեթիվը. մոտ Մ.թ.ա. 4 թ.
- Ծննդյան քաղաքը. Բեթղեհեմ
- Մահվան տարեթիվը. Մոտ 30թ.
- Մահվան քաղաքը. Երուսաղեմ
- Ազգությունը. Հրեա Հուդայի ցեղից
- Ծնողները. Աստված և Մարիամ
- Հոգեհայրը. Հովսեփ
- Խորթ եղբայրներն ու քույրերը. Հակոբոս, Հովսիա, Սիմոն, Հուդա և երկու քույր
- Մասնագիտությունը. հյուսն և ուսուցիչ (ռաբբի)

Հիսուսի կյանքը

- Հիսուսը ծնվել է մոտ Մ.թ.ա. 4 թվականին՝ ավելի քան 2000 տարի առաջ: Նա ծնվել է Բեթղեհեմում, Մարիամի և Հովսեփի ընտանիքում: Հովսեփը Նրա հայրը չէր: Աստված այնպես էր արել, որ Մարիամը հղիանար: Միայն այդպես Աստծո Որդին կարող էր այս աշխարհում ծնվել որպես Մարդ: Աստված դարձավ Մարդ:
- Երբ Հիսուսը դեռ շատ փոքր էր, Հերովդես թագավորը փորձում էր Նրան սպանել: Մարիամն ու Հովսեփը փախան Եգիպտոս: Այնտեղ նրանք ապրեցին մի քանի տարի, այնուհետ վերադարձան Իսրայել և ապրեցին Նազարեթում:
- Երբ Հիսուսը 12 տարեկան էր, Նա ծնողների հետ գնաց Երուսաղեմ: Սուրբ Գրքի՝ Նրա զարմանալի գիտելիքները նկատեցին հուդայական ուսուցիչները:
- 30 տարեկանում Հիսուսը սկսեց Իր եռամյա ճամփորդությունը Իսրայելով: Նա սովորեցնում էր մարդկանց, նրանց պատմում, թե ինչպիսին է Աստված, և կոչ էր անում վստահելու Իրեն՝ որպես Աստծո Որդի: Որպես ապացույց, որ Իրեն ուղարկել էր Աստված, Հիսուսը հրաշքներ էր գործում:
- Նրան ուղեկցում էին աշակերտները՝ տղամարդիկ և կանայք, նրանցից տասներկուսը Նրա մտերիմ ընկերներն էին:
- Շատ հուդայական ուսուցիչներ, դպիրներ ու փարիսեցիներ չէին հավատում Հիսուսին և ուզում էին սպանել Նրան:
- Հիսուսը մահացավ խաչի վրա բոլոր մարդկանց մեղքերի համար, իսկ երրորդ օրը հարություն առավ:
- Իր հարությունից 40 օր անց Հիսուսը վերադարձավ Իր Երկնավոր Հոր մոտ: Այնտեղ նա նստած է գահին՝ Աստծո աջ կողմում: Մի օր նա հրեշտակների հետ կրկին կգա երկիր:

Հետաքրքիր փաստ. Քրիստոսը Հիսուսի ազգանունը չէ, այլ ևս մեկ անուն, որը նշանակում է «թագավոր»:

ԻՆՉ ԷՐ ՀԻՍՈՒՍ ԱՍՈՒՄ ԻՐ ՄԱՍԻՆ

Վալդեմար Յորն

Աշխարհում ոչ ոք չի կարող համեմատվել Հիսուս Քրիստոսի հետ: Ոչ ոք մարդկության վրա այնքան մեծ ազդեցություն չի գործել, որքան Նա: Հիսուսի մասին բազմաթիվ գրքեր են գրվել: Նրա մասին քարոզում են, պատմում, ֆիլմեր նկարում, գիտական հոդվածներ գրում:

Ուրեմն ո՞վ է Նա: Եթե մենք ցանկանում ենք որևէ մեկի մասին ինչ-որ հավաստի բան իմանալ, ապա ամենաճիշտը հենց իրեն հարցնելն է, ճիշտ չէ՞: Դրա համար լավ է իմանալ, թե Հիսուսն ինչ է ասել Իր մասին: Նրա խոսքերը գրված են Ավետարաններում: Նրա բոլոր ասածները ես չեմ կարող քեզ փոխանցել, ժամանակը չի բավականացնի, բայց մի քանի կարևոր մեջբերում, ամեն դեպքում, կներկայացնեմ:

«Ապա Հիսուսը դարձյալ խոսեց նրանց հետ՝ ասելով. «Ես եմ աշխարհի լույսը. նա, որ Ինձ կհետևի, խավարի մեջ չպիտի քայլի, այլ կյանքի լույսը պիտի ունենա»»:

Երբ Նրան շրջապատած մարդիկ սկսեցին զայրանալ, Նա շարունակեց. «Ե՛ս եմ, որ Իմ մասին վկայում եմ, և Հայրը, որն Ինձ ուղարկեց, վկայում է Իմ մասին»: Սակայն նրանք չէին դադարում զայրանալ:

«Եվ Նա ասաց նրանց. «Դուք ներքևից եք, Ես վերևից եմ. դուք այս աշխարհից եք, Ես այս աշխարհից չեմ: Դրա համար Ես ձեզ ասացի, որ դուք ձեր մեղքերի մեջ պիտի մեռնեք, որովհետև եթե չհավատաք, որ Ես եմ, ձեր մեղքերի մեջ կմեռնեք»: Նրանք էլ ասացին Նրան «Դու ո՞վ ես»: Հիսուսն ասաց նրանց. «Այն նույնը, որ սկզբից ձեզ ասացի»»:

Հիսուսը նրանց տեղեկացրեց, որ Ինքն Աստված է: Հրեաները չհավատացին Նրան: Այդ ժամանակ Հիսուսն ասաց, որ անձամբ հայր Աբրահամը՝ Իսրայելի ժողովրդի նախահայրը, տեսել է Հիսուսին և



Ի՞նչ ես կարծում.

1. Ի՞նչ անունով էր Հիսուսն անվանում Իրեն:
2. Ի՞նչ է նշանակում «Ես եմ» անունը:
3. Ինչո՞ւ է կարևոր հավատալ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, և որ Ինքն ու Հայրը մեկ են:

ուրախացել Նրա համար: Հիսուսին հակաճառեցին և ասացին, որ Աբրահամը վաղուց է մահացել. ինչպե՞ս կարող է Հիսուսը նման բան ասել: Հիսուսը նրանց պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Աբրահամի լինելուց առաջ Ես եմ»:

Իսկ «ԵՍ ԵՄ»-ը Աստծո՝ երկնքի ու երկրի Արարչի անունն է: Հիսուսն Իրեն շրջապատող մարդկանց ասաց, որ Ինքն ու Հայրը մեկ են: Հիսուս Քրիստոսին հավատացողը հավիտենական կյանք ունի և չի դատապարտվի: Հիսուս Քրիստոսին մերժողը և՛ Աստծուց կմերժվի, և՛ իր անհավատության համար հավիտենական պատիժ կկրի:

Ամեն մարդ ինքը պետք է որոշում կայացնի. հավատա՞լ Իրեն, թե՞ ոչ, ասաց Հիսուսը: Եվ այդ որոշումից է կախված լինելու, թե որտեղ է մարդն անցկացնելու հավիտենությունը. երկնքո՞ւմ՝ Իր հետ, թե՞ դժոխքում:

Այն, ինչ Հիսուսն ասել է, դու կարող ես գտնել Ավետարաններում: Օրինակ՝ Հովհաննեսի Ավետարանի ութերորդ գլխում:

ԱՍՏՈՇ ՈՐԴԻ ԵՎ ՄԱՐԴ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ

Վալդեմար Յորն

Ինչո՞վ է քրիստոնեությունը տարբերվում մյուս կրոններից, օրինակ՝ բուդդայականությունից և մահմեդականությունից: Բոլոր մյուս կրոնների հիմնադիրները մահացել են: Նրանց գերեզմանները սրբության նման պաշտում են այդ կրոնների հետևորդները: Իսկ քրիստոնեությունը, որի հիմնադիրը Հիսուս Քրիստոսն է, այլ է: Ինչու՞: Որովհետև Քրիստոսը մահացել է (մենք գիտենք, որ Նա մահացել է բոլոր մարդկանց մեղքերի համար), բայց Նա նաև հարություն է առել:

Նա ողջ է և ապրում է ոչ միայն երկնքում, որտեղ Նա «երկնավոր Հոր աջ կողմում է», այլև բոլոր նրանց սրտերում, ովքեր հավատում են Իրեն: Չէ՞ որ Աստվածաշնչում գրված է. «Իսկ ով Քրիստոսի Հոգին չունի, նա Նրանը չէ»: Այսինքն այդպիսի մարդը չի կարող իրեն համարել քրիստոնյա:

Դու կհարցնես. «Բայց Հիսուսը մարդ էր, չէ՞: Նա ինչպե՞ս կարող է լինել Աստված և Մարդ՝ միաժամանակ»: Լավ հարց է: Դու արդեն առիթ ունեցե՞լ ես լսելու, թե եկեղեցում ինչպես են բոլորը միասին բարձրաձայն կարդում Հավատքի հանգանակը: Ուրեմն այսպես, առաքյալներն ու առաջին քրիստոնյաները հավատում էին, որ Հիսուսը եկել է երկնքից և իրական Աստված է և որ Նա ծնվել է Մարիամից ու դարձել իսկական Մարդ: Մեկը մյուսին չի հակասում: Նրա ծնունդը մենք տոնում ենք առանձնահատուկ հանդիսավորությամբ, տոնն այդպես էլ կոչվում է «Սուրբ Ծնունդ»:

Ավետարանները պատմում են, որ Հիսուսը, ինչպես և բոլոր մարդիկ, հոգնում էր, քնում, քաղց և ծարավ էր զգում, տառապում էր և... մահացավ: Բայց Նա, ի տարբերություն մարդկանց, անմեղ էր, քանի որ Աստծո Որդին էր: Այդ պատճառով էլ Հիսուս Քրիստոսի մահը զոհ է մեզ՝ բոլորիս համար: Հիսուսն Իրեն մահվան մատնեց՝ Իր վրա վերցնելով մեր մեղքերի պատիժը: Եվ Աստված ընդունեց այդ զոհը՝ մեռելներից հարություն տալով Հիսուսին:

Անգի՛ր սովորիր Հավատքի հանգանակը: Դա բոլորովին բարդ չէ: Հայրիկն ու մայրիկը կամ պապիկն ու տատիկը կօգնեն քեզ: Իմանալով հավատքի այդ խորհուրդը՝ դու կիմանաս բոլոր գլխավոր բաները, որոնցով քրիստոնեությունը տարբերվում է աշխարհի բոլոր կրոններից և որոնք մեզ համար ամենակարևորն են կյանքում:

ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հավատում եմ **Աստծուն**՝ Ամենակարող Հորը, երկնքի ու երկրի Արարչին:

Եվ **Հիսուս Քրիստոսին**՝ Նրա միածին Որդուն և մեր Տիրոջը,
Որ ծնվել է Սուրբ Հոգուց
և կույս Մարիամից,
չարչարվել Պոնտացի Պիղատոսի օրոք,
խաչվել, մահացել և թաղվել է,
գնացել դժոխք,
երրորդ օրը հարություն առել մեռելներից,
բարձրացել Երկինք և նստած է
Ամենակարող Հայր Աստծո աջ կողմում,
որտեղից գալու է դատելու ողջերին
ու մահացածներին:

Հավատում եմ **Սուրբ Հոգուն**,
սուրբ Տիեզերական Եկեղեցուն,
սրբերի հաղորդակցությանը,
մեղքերի ներմանը,
մարմնի հարությանը,
հավիտենական կյանքին:

Ամեն:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԸ

Օլեսյա Իսահակ

Կարծում եմ, դու արդեն լսել ես, որ Արևը մեծ աստղ է:
Բայց դու գիտեի՞ր, որ այն կարևոր է Երկրի վրա կյանքի համար:

Արևի լույսը կյանք է պարգևում բնությանը: Եվ որքան շատ է լույսը, այնքան շատ էներգիա են ստանում բույսերը, կենդանիները և մարդիկ: Աշնանն ու ձմռանը, երբ արևը շատ ցածր է և շատ քիչ ջերմություն է տալիս, բնությունը քնում է: Ծառերը տերևաթափ են լինում, շատ բույսեր թոշնում են, իսկ որոշ կենդանիներ ողջ ձմեռ քուն են մտնում (օրինակ՝ արջերն ու գորշուկները): Եվ նույնիսկ մարդիկ ձմռանը ավելի քիչ էներգիա են ունենում:

Դու երբևէ նկատե՞լ ես, թե ինչով են իրարից տարբերվում նախաճաշներն ու ընթրիքները ձմռանը և ամռանը: Հուշում. նայի՛ր պատուհանից:

Ամենահեռավոր Հյուսիսում նույնիսկ ամռանը շատ քիչ է արևի լույսը: Այդ պատճառով էլ այնտեղ գրեթե անհնար է բույսեր հանդիպել և միայն շատ քիչ կենդանիներ կարող են գոյատևել նման պայմաններում:

Սակայն ձմռանը հաջորդում է գարունը և շուրջն ամեն բան փոխում: Բնությունն արթնանում է, ծառերը բողբոջում են, ծաղիկներ են հայտնվում և արթնանում է կենդանական աշխարհը: Այդ ամենը՝ շնորհիվ արևի լույսի, որն էներգիա է հաղորդում շրջապատող ողջ բնությանը: Որպեսզի մարդիկ կարողանան գոյատևել, նրանց սնունդ է անհրաժեշտ: Իսկ բույսերի սնունդը էներգիան է, որը ստանում են արևից:

Եթե որևէ սենյակային բույս մի քանի օր թաքցընես մութ վայրում, այն կսկսի թոշնել: Բայց, եթե այն նորից դնես արևի տակ, կրկին կարթնանա ու կծաղկի:

Արևի էներգիան այնքան զորեղ է, որ ոչ միայն ջերմություն է տալիս Երկրին, դրանով իսկ փոխելով եղանակը, և «սնունդ» բույսերին, այլև ազդում է մեր օրգանիզմի վրա: Արևի ճառագայթների ազդեցության ներքո ձևավորվում է վիտամին D, որն անհրաժեշտ է ոսկրերի առողջ աճի համար: Այս վիտամինի պակասը կարող է պատճառ դառնալ ոսկրերի հաճախակի կոտրվածքների և մշտական հոգնածության: Վիտամին D-ն ազդում է նույնիսկ մեր տրամադրության վրա: Ոմանք այն անվանում են «արևի վիտամին»:

Իսկ դու գիտե՞ս, թե Աստվածաշունչն Ում է անվանում Ճշմարտության Արև: Հիսուս Քրիստոսին: Նա զարմանալի զորության է տիրապետում: Երկրում եղած ժամանակ Նա անհնարինն էր գործում. բժշկում էր հիվանդներին, տեսողություն էր պարգևում կույրերին, հարություն էր տալիս մահացածներին և հանդարտեցնում էր փոթորիկը: Սակայն ամենամեծ բանը, որ Նա արեց մարդկանց համար, այն էր, որ Նա մահացավ մեր մեղքերի համար և հարություն առավ մեռելներից, մեզ պարգևեց մեղքերի ներում և հավիտենական կյանք: Նրանց, ովքեր հավատում են Իրեն, Հիսուսը տալիս է անհնարինն անելու ուժ. ներել նրանց, ովքեր նեղացնում են մեզ, սիրել թշնամիներին, բարիք գործել բոլորի համար և չարի փոխարեն երբեք չարիք չհատուցել: Հենց դա է Հիսուս Քրիստոսի ուժը մեզանում, որը հազարավոր արևներից պայծառ է շողում:

Իսկ դու ունե՞ս այդ ուժը, որը քեզ օգնում է անել անհնարինը: Վերջին ժամանակներս Հիսուսը քեզ ի՞նչ է օգնել անել:

Աղոթք

Հիսու՛ս, շնորհակալություն, որ Դու Քո զորավոր ձեռքով պահում ես ամեն բան երկրի վրա: Շնորհակալություն, որ Դու հաղթել ես մահվանը, որ մեզ հավիտենական կյանք ես պարգևել: Շնորհակալ եմ, որ նաև ինձ ես ուժ տալիս, որ բարիք գործեմ և հաղթեմ մեղքին իմ կյանքում: Շնորհակալ եմ, որ անհնարինը հնարավոր ես դարձնում:

ԴՈՐԻՆ ԵՎ ՆԵՄՈՆ

Անդի Ֆետ

Այս տարի Անտոնի և Էռնայի երազանքը կարող է կատարվել: Նրանք կունենան իրենց սեփական ակվարիումը: Վերջապես հնարավոր կլինի Դորիին և Նեմոյին հետևել ոչ միայն էկրանից, այլև իրականում:

Սուրբ Ծնունդից մեկ շաբաթ առաջ Անտոնն ու Էռնան հայրիկի հետ ուղևորվեցին կենդանիների խանութ: Նրանք ուզում էին այնտեղից դուրս գալ գնումների մեծ տուփով: Եղբայր ու քույր անհամբերությունից վառվում էին: Բայց վաճառողը հարկ համարեց համոզվել. արդյո՞ք նրանք բարի մտադրություններ ունեն:

– Ձեր երեխաներն իրո՞ք ուզում են զբաղվել ակվարիստիկայով, – հարցրեց նա, – դուք հասկանու՞մ եք, որ ծովային ակվարիումը պահանջում է որոշ գիտելիքներ ու կարողություններ և մշտական խնամքի կարիք ունի: Դուք կարո՞ղ եք դա վստահել ձեր երեխաներին: Եվ դա բավականին թանկ հաճույք է: Ծովային ակվարիումը պետք է տեխնիկապես լավ հագեցած լինի:

Անտոնն ու Էռնան անհանգիստ իրար նայեցին, բայց հայրիկը վստահ պատասխանեց.

– Մենք լավ ենք մտածել այդ մասին: Սկսնակների համար հաստատ կան ավելի պարզ ակվարիումներ: Բացի այդ, ես նրանց օգնելու եմ: Բայց ես վստահ եմ, որ իմ երեխաները այդ խնդիրը հաջողությամբ կլուծեն:

Կես ժամ անց բոլոր անհրաժեշտ պարագաները դրամարկղի մոտ էին. 250 լիտրանոց ակվարիում, լուսավորություն, ջեռուցում, ներքին ու արտաքին ֆիլտրեր, փրփրազտիչ, ստորջրյա բույսեր, ձկների կեր, մի խոսքով՝ այն ամենը, ինչ անհրաժեշտ է ծովային ակվարիումի համար:

– Հիմա պետք են միայն ձկնիկները, – բացականչեց Անտոնը:

– Եվ ջուրը, – ավելացրեց քույրիկը:

– Ուրեմն, առա՜ջ, ձեզ համար նոր սենյակակիցներ ընտրեք: Յուրաքանչյուրդ կարող է ընտրել

երեքական ձկնիկ: Բայց նրանց կարող ենք տուն տանել միայն այն ժամանակ, երբ տեղադրենք ակվարիումը:

Անտոնն իր համար ընտրեց 3 դեղին զոլավոր լոքո, իսկ Էռնան՝ վեց բծանի շրթնաձուկ: Դորի ձկնիկը՝ երկնագույն վիրաբույժը և Նեմոն՝ ձուկ ծաղրածուն , իհարկե, արդեն սպառվել էին:

– Դրանցից խանութ են բերելու մյուս տարի, – տեղեկացրեց վաճառողը:

– Դուք կարող եք նրանց ցանկանալ որպես ձեր ծննդյան օրվա նվեր, – փորձեց երեխաներին սրտապնդել հայրիկը:

Տանը ընտանիքին հեշտ գործ չէր սպասում: Անտոնն ու Էռնան սկսեցին աստիճանաբար հասկանալ, թե որքան բարդ բան է ծովային ակվարիումը: Ձկներին գոյատևման համար հարկավոր է ջրում ուղիղ 3.5% աղի պարունակություն: Ջրի ջերմաստիճանը պետք է լինի ոչ պակաս, քան 24 աստիճանը և ոչ ավել, քան 28 աստիճանը: Եվ ջուրը անդադար պետք է զտիչով մաքրվի:

Ձկնիկներին նրանք կարողացան տուն տանել միայն դեկտեմբերի 23-ին: Լավ է, գոնե Սուրբ Ծնունդին հասցրեցին: Սակայն տոներից երկու օր անց Էռնան հետևյալ գրառումն արեց օրագրում.

«Ես այնքան տխուր եմ: Ես ամեն օր հետևում եմ ձկներին: Միացնում եմ ուլտրամանուշակագույն լամպը, կերակրում եմ նրանց: Հայրիկը միշտ ստուգում է ջուրն ու նրանց վիտամիններ տալիս: Մենք այնքա՞ն բան ենք անում: Բայց այնքան տխուր եմ, որ գրեթե չեմ տեսնում ձկնիկներին: Հենց ես մոտենում եմ ակվարիումին, նրանք բոլորը խուճապահար թաքնվում են քարերի և բույսերի հետևում:



Հայրիկից ու Անտոնից ևս թաքնվում են: Նրանք վախենում են մեզանից: Բայց ինչու՞: Նրանք երբևէ մեզ կվստահե՞ն»:

Հունվարին Էռնան նորից գնաց կենդանիների խանութ: Հետաքրքիր է, արդեն հնարավո՞ր է գնել Դորի և Նեմո: Նա մեծ հույս ուներ: Խանութի դռան մոտ աղջիկը հանդիպեց հարևան Էթյենին:

– Բարև, Էռնա՛: Ի՞նչ ես անում այստեղ:

Էռնան անմիջապես նրան պատմեց ձկնիկների և իր հիասթափության մասին:

– Ուզում էի իմանալ, արդեն ստացե՞լ են ձուկ ծաղրածու և երկնագույն վիրաբույժ: Տոներից առաջ դրանք սպառվել էին: Հույս ունեմ, նրանք այնքան վախկոտ չեն լինի, որքան այն ձկնիկները, որ մենք ստացել ենք Սուրբ Ծնունդին, – ասաց Էռնան, հրաժեշտ տվեց ու մտավ խանութ:

Մեկ րոպե անց նա դուրս եկավ: Աղջիկը խիստ սրտնեղած էր: Էթյենը կանգնած էր մեքենայի մոտ:

– Դե ի՞նչ: Չկա՞ն քո ձկնիկները:

– Չէ: Եվ ոչինչ հնարավոր չէ անել: Միայն մի քանի շաբաթ հետո են բերելու: Ես կարող եմ նրանց ցանկանալ միայն ծննդյանս օրը՝ մարտի վերջին: Մեր ձկները շատ վախկոտ են: Թեև ես օրը երեք անգամ հանում եմ ակվարիումի կափարիչը, որ կերակրեմ նրանց, նրանք իրենց այնպես են պահում, ասես ես իրենց անընդհատ տանջում եմ: Ինչու՞ նրանք չեն հասկանում, որ ես հոգ եմ տանում իրենց մասին:

– Այո, Էռնա՛, – պատասխանեց Էթյենը, – նրանք քեզ չեն հասկանում: Քո բարի մտադրությունները նրանք ընկալում են որպես սարսափելի հարձակում: Քո ձկնիկների համար դու «վերին էակ» ես: Դու նրանց համար ոչ միայն չափազանց մեծ ես, այլև, ներողություն բառերիս համար, անծանոթ հրեշ, որից նրանք շատ են վախենում: Նրանց համար ինչ-որ լավ բան անելու քո բոլոր ջանքերը նրանք ընկալում են որպես սպառնալիք: Դա փոխելու համար դու պետք է անես այն, ինչ արեց Աստված Սուրբ Ծնունդին:

– Իսկ Նա ի՞նչ արեց, – Էռնան հարցական հայացքով նայեց Էթյենին՝ կնճռոտելով ճակատը:

– Մարդկանց և Աստծո հարաբերությունները նման են քո և ձկների հարաբերությանը:

– Ի՞նչ է դա նշանակում, – դեռ չէր հասկանում Էռնան:

– Եթե ուզում ես քո ձկնիկները քեզ հասկանան, դու ստիպված ես այլ կերպար ընդունել: Դառնալ իրենցից մեկը: Դառնալ ձուկ: Հենց դա արեց Աստված մեզ համար Հիսուս Քրիստոսի անձի մեջ: Նա, իհարկե, չմտավ «ակվարիում», բայց Նրան տեղավորեցին կենդանիների կերամանի մեջ: Դա այն է, ինչ մենք նշում ենք Սուրբ Ծնունդին. Աստված մանուկ դարձավ մեզ համար: Նա դարձավ այնպիսին, ինչպիսին մենք ենք: Եթե մարդը կարողանար ձուկ դառնալ, դա դեռ ոչինչ կլիներ նրա համեմատ, որ մեծ Աստված անօգնական մանուկ դարձավ: Նա այս աշխարհ եկավ փոքրիկ, անպաշտպան և թույլ: Նա մոտեցավ մարդկանց: Դա մարդկանց փրկության Աստծո ծրագիրն էր: Նա դարձավ մեզ նման, որ մենք կարողանայինք վստահել Իրեն:

Այդ երեկո Անտոնի և Էռնայի տան դռան զանգը ինչ-որ մեկը տվեց: Շեմքին կանգնած էր Էթյենը՝ ձեռքին մի տոպրակ:

– Գիտե՞ք, ես գնացել էի հարևան քաղաք: Այն մոտ է, իսկ մինչ մարտ ամիսը դեռ շատ ժամանակ կա: Ես մտածեցի, որ կարող եմ ձեզ ուրախություն պարգևել, եթե հանկարծ այնտեղ գտնեմ այն, ինչ չկա մեր կենդանիների խանութում:

Նրա ձեռքին ջրով լի թափանցիկ տոպրակ էր: Ջրում լողում էին կապույտ ու նարնջագույն ինչ-որ բաներ:

– Դորին ու Նեմո՜ն, – հիացմունքով բացականչեց Էռնան, – նայի՜ր, նրանք մեզանից չեն փախչում:

– Այս տոպրակում նրանք հեռու փախչել չեն կարող, – քթի տակ ծիծաղեց Անտոնը:

ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ՎԻԿՏՈՐԻՆԱ

Օլեսյա Իսահակ

Անցի՛ր Հիսուս Քրիստոսի կյանքի փաստերի լաբիրինթոսով: Պատասխանի՛ր «Ճիշտ է» կամ «սխալ է»: Ստուգի՛ր գիտելիքներդ և իմացի՛ր ինչ-որ նոր բան:

ՍԿԻԶԲ

1. Հիսուսի մոր անունը Մարիամ էր:

Ճիշտ է — Սխալ է

Մարիամը Հիսուսի մայրն էր:

2. Հիսուսը Բենիամինի ցեղից էր:

Ճիշտ է — Սխալ է

Կրկի՛ն փորձիր:

Հիսուսը, իր մայրն ու հոգեհայրը Հուդայի ցեղից էին:

3. Հիսուսի հոգեհոր անունը Մաթևոս էր:

Ճիշտ է — Սխալ է

Հիսուսի երկրավոր հոր անունը Հովսեփ էր:

4. Հիսուսը ծնվել է ազգահամարի ժամանակ:

Ճիշտ է — Սխալ է

Կրկի՛ն փորձիր:

Մարիամն ու Հովսեփը ուղևորվեցին Բեթղեհեմ՝ ազգահամարին մասնակցելու: Հիսուսը ծնվեց այնտեղ:

5. Նորածին Հիսուսին այցի եկան հովիվները

Ճիշտ է — Սխալ է

Լսելով Հիսուսի ծնվելու մասին լուրը՝ հովիվները շտապեցին Բեթղեհեմ՝ Նրան խոնարհվելու:

6. Հրեշտակները հայտնվեցին մոգերին և պատմեցին, որ Հիսուսն է ծնվել:

Ճիշտ է

Սխալ է

Կրկի՛ն փորձիր:

Հրեշտակները հայտնվեցին հովիվներին: Մոգերը տեսան աստղը ու հասկացան, որ դա հենց այն աստղն է, որը նշանակում է, որ ծնվել է մեծ Թագավորը:

7. Մինչ Հիսուսի մոտ գնալը՝ մոգերը մտան թագավորի պալատ:

Ճիշտ է

Սխալ է

Կրկի՛ն փորձիր:

Մոգերը չգիտեին՝ ուր գնալ, այդ պատճառով մտան արքայի պալատ, որ հարցնեին, թե որտեղ է ծնվել մեծ Թագավորը:

8. Մոգերը Հիսուսին նվեր էին բերել ոսկի, նարդոս և զմուռս:

Ճիշտ է

Սխալ է

Կրկի՛ն փորձիր:

Մոգերը բերել էին ոսկի, կնդրուկ և զմուռս: Կնդրուկը ծառերի խեժ է, որն այրելու դեպքում հաճելի բույր է արձակում:

9. Հիսուսի ծնվելուց հետո Մարիամը, Հովսեփը և Փոքրիկն ուղևորվեցին հանգստի՝ դեպի Եգիպտոս:

Ճիշտ է

Սխալ է

Մարիամը, Հովսեփն ու Հիսուսը Եգիպտոս փախան Հերովդես թագավորի հետապնդումներից, որն ուզում էր սպանել Հիսուսին:

10. Հիսուսը պատանի էր, երբ հայտնվեց Երուսաղեմի տաճարում և սկսեց շփվել դպիրների հետ:

Ճիշտ է

Սխալ է

Հիսուսը 12 տարեկան էր: Նա Երուսաղեմ էր գնացել ծնողների հետ՝ Զատկի տոնին:

Կրկի՛ն փորձիր:

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՏՈՀՄԱԾԱՌ



Նկ. Ելենա Գավրիշչուկ

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ

Անդի Ֆետ

Սուրբ Ծնունդը շատ մոտ է: Եվ հենց դրա մասին է մեր պատմությունը: Հատուկ ուշադրություն դարձրո՛ւ դռանը: Չէ՞ որ այդ օրը շատերը մոռանում են տոնի նշանակությունը:

– Էթյե՜ն, – այնքան բարձր բացականչեց Մատցեն, որ նրա հարևանը, չնայած միացրած փոշեկուլին, լսեց նրան, – Էթյե՜ն, ինձ շտապ քո օգնությունն է պետք: Ես կարո՞ղ եմ պարտքով վերցնել քո շնիկին՝ Բլինչիկին:

– Եվ ինչու՞, – տարակուսանքով հարցրեց պատանին՝ անջատելով փոշեկուլը, որով մաքրում էր իր մեքենան:

Մի փոքր շտապողականությամբ տղան բացատրեց իրավիճակը.

– Մեր դպրոցում լավագույն լուսանկարի մրցույթ է: Այն դասարանը, որը լավագույն կերպով կներկայացնի Սուրբ ծննդյան իմաստը, կստանա նոր համակարգիչ:

– Իսկ իմ Բլինչիկը ձեր ինչի՞ն է պետք, – դեռ ոչինչ չէր հասկանում Էթյենը:

– Դե մենք մտածեցինք, որ նա իր սպիտակ ու փափուկ մորթով գառնուկի կարող է փոխարի-

նել: Կարելի՞ է ես քեզ հետո ամեն ինչ բացատրեմ: Մենք պետք է շտապենք: Մեկ ժամից լուսանկարները պետք է հանձնենք:

Էթյենը հազիվ էր հասցրել գլխով անել, երբ Մատցեն խլեց շնիկին և վազեց: Տղան բառացիորեն թռչում էր դպրոցի բակով: Վախեցած Բլինչիկին նա թաքցրել էր ուսապարկում: Դասարանցիներն արդեն սպասում էին նրան: Դասարանի մեջտեղում արդեն դրված էր մսուրը: Շուրջը չոր խոտ էր փռված, փոքրիկ աթոռակի վրա մի հին ու փոշոտ լամպ էր դրված, իսկ պատին փոցխ էր հենած: Երեխաներն արդեն զգեստափոխվել էին: Նրանց մեջ ճանաչելի էին Մարիամը, Հովսեփն ու հովիվները:

Դեկորացիաները հաջողված էին: Թվում էր, թե իրոք Բեթղեհեմում ես:

– Հիմա տնօրենն իսկապես կարող է ասել, որ 6 «Ա» դասարանում ասես խոզանոց սարքած լինեն, – ծիծաղեց Քևինը, – հատկապես, եթե կենդանիներ էլ բերենք այստեղ:

– Բայց Բլինչիկը շատ խելոք է, – առարկեց Մատցեն, հանեց շնիկին ուսապարկից ու դրեց խոտերին:

Պատրիկը հաճույքով հանեց իր լիովին նոր ֆոտոխցիկը:

– Ուշադրությու՞ն, – բարձր ասաց նա, – հիմա թռչնակը կթռչի:

Բայց այդ պահին Բերտայի գլխում ևս մի միտք ծագեց.

– Ստո՞պ, – բացականչեց նա, – դեռ մի բան պակասում է: Իսկ ի՞նչ կլինի եթե մենք ճագարների դուռը հանենք ու բերենք այստեղ: Այն փոքրիկ պատուհան ու ճաղեր ունի: Կարելի է այնպես լուսանկարել, կարծես ինչ-որ մեկը պատուհանից նայում է մսուր:

– Հրաշալի մի՞տք է: Միայն պետք է շտապենք:

Տղաներից երկուսն անմիջապես վազեցին դպրոցական այգի, որտեղ դրված էին ճագարների վանդակները: Հանելով թեթև դուռը՝ աստիճաններով բարձրացրին դասարան:

Եվ ահա, բոլորը պատրաստ են: Մատցեն փորձում էր տեղում պահել Բլինչիկին, Տոբին ու Բերտան պահել էին դուռը, որ չընկներ: Իսկ Լիզան բռնել էր աթոռը, որի վրա կանգնել էր Պատրիկը՝ փորձելով լուսանկարել դռան լուսամուտից:

– Ա՜յ սա ընտիր է: Ամեն բան ասես իրական լինի ու ես իրոք պատուհանից նայում եմ մսուր: Մյուս դասարանները հաստատ նման հրաշալի միտք չեն ունեցել, – Պատրիկը երեք լուսանկար նկարեց, – երեք րոպե մնաց: Մատցե՛, վերցրու՛ հիշողության քարտը և արագ վազի՛ր ուսուցչանոց:

Հենց Մատցեն դուրս եկավ դռնից, շունը վազեց նրա հետևից: Բերտան սարսափահար պտտվեց, հավասարակշռությունը կորցնելով, և ձեռքից

բաց թողեց դուռը: Դուռը դղրդյունով ընկավ մսուրի վրա, լամպը դրա հետևից թռավ: Ապակին ջարդուփշուր եղավ, իսկ չոր խոտը վերև թռավ: Բարեբախտաբար ոչ ոք չտուժեց:

– Հիմա սա աղբակույտի է նման, ոչ թե սուրբ-ծննդյան մսուրի, – ասաց Պատրիկը, – լավ է, որ լուսանկարներն արդեն արել ենք:

– Եվ որ լամպը չէր վառվում, – թեթևացած շունչ քաշեց Բերտան, – և որ Բլինչիկը մսուրի մոտ չէր նստած, թե չէ հիմա նա լրիվ տրորված ու տափակ կլիներ, ինչպես իսկական նրբաբլիթը:

Մի փոքր անց Մատցեն, Բերտան և Տոբին շնիկին վերադարձրեցին իր տիրոջը:

– Դե ի՞նչ, լուսանկարիչնե՛ր, մրցանակ շահեցի՞ք, – հարցրեց էթյենը, երբ երեխաները մտան ավտոտնակ:

– Հաստատ չէ, – ասաց Մատցեն:

– Բայց Բլինչիկը մեղք չունի, – ավելացրեց Տոբին:

– Ընդհանրապես, ես եմ մեղավոր ամեն ինչում, – եզրափակեց Բերտան:

– Չէ՞... Պատրիկն է մեղավոր, – առարկեց Մատցեն:

– Բայց դռան հետ կապված այդ հիմար միտքն իմն էր, չէ՞, – մեղավոր ավելացրեց Բերտան:

– Ամեն ինչ ապարդյուն էր...

– Վերջը ի՞նչ է պատահել:

Բլինչիկը թռավ էթյենի գիրկը: Իսկ Մատցեն գլխիկոր սկսեց բացատրել.

– Ամեն ինչ մեր ծրագրածի պես չընթացավ: Ես մտա ուսուցչանոց և տնօրենին տվեցի լուսանկարներով հիշողության քարտը: Նա դրանք ներբեռնեց համակարգչի մեջ ու ասաց, որ մենք հազիվ հասցրեցինք, մյուսները վաղուց պատրաստ են: Նա էկրանին բացեց նկարները, և ես տեսածիս չհավատացի: Բոլոր նկարները ոչ հստակ ու լղոզված էին: Մնացած ամբողջը, ինչի վրա մենք այդքան ջանք էինք թափել, գրեթե չէր երևում: Կարելի էր միայն ենթադրել, թե ինչ է այնտեղ պատկերված: Փոխարենը նկարներում հստակ երևում են դուռն ու Բերտայի ձեռքը: Պատրիկն այնքան էլ լավ չի կարողանում օգտվել նոր ֆոտոխցիկից: Իսկ մրցույթի թեման էր. «Ի՞նչ է Սուրբ Ծնունդը»:

– Դրա համար էլ մենք չգնացինք համադպրոցական ժողովին ու մրցանակաբաշխությանը: Եվ պետք էր Բլինչիկին քեզ վերադարձնել:

– Արձակուրդների անհաջող սկիզբ... – հոգոց հանեց Տոբին:

Հանկարծ ավտոտնակ մտավ Մատցեի մայրիկը:

– Իսկ դուք ի՞նչ եք անում այստեղ: Ինչու՞ դպրոցում չեք: Տնօրենը զանգել ու ասում էր, որ շտապ վերադառնաք դպրոց: Եվ ինչ-որ դռան մասին էր ասում...

– Ես կտանեմ ձեզ, – ասաց էթյենը:

Նա արդեն տասնութ տարեկան էր և կարող էր մեքենա վարել: Երեխաները տեղավորվեցին հետևի նստարանին: Դպրոցի ճանապարհին դասից փախած երեխաները նյարդայնացած քննարկում էին, թե ինչ կարող էր պատահել:

– Երևի երեխաները չեն կարողացել բոլոր ճագարներին հետ տեղավորել վանդակի մեջ:

Այ, թե կորած ենք... Եվ դա դեռ Սուրբ Ծննդյան նախաշեմին:

– Կամ էլ դուռն է կոտրվել... – անհանգըստացած ասաց Մատցեն:

– Այդ ամենն իմ մեղքով էր. – հոգոց հանեց Բերտան, – հիմա ինչպե՞ս դուրս գանք այս ամենից: Ի՞նչ կլինի, եթե մայրիկն իմանա... Ի՞նչ անենք:

– Եկեք աղոթենք: Աստված լսում է մեզ, չէ՞, ու հաստատ կօգնի, – առաջարկեց Էթյենը, – սիրելի՛ Հայր, Դու գիտես, թե ինչ վիճակում են հիմա երեխաները: Եվ Դու տեսնում ես, որ նրանք վատ մտադրություններ չեն ունեցել: Հրա՛շք գործիր, որ ամեն բան լավ լինի և կարողանանք հանգիստ տոնել Սուրբ Ծնունդը: Հիսուս Քրիստոսի անունով: Ամեն:

Հենց այդ պահին նրանք մտան դպրոցի բակ: Դահլիճ մտնելով՝ երեխաները տեսան իրենց ողջ դասարանին: Սյուների հետևից մի ձայն հնչեց.

– Ահա, թե որտեղ եք: Արագ բե՛մ բարձրացեք: Ճի՞շտ է, որ դռան հետ կապված միտքը ձերն է եղել:

Բերտան սկսեց դողալ ու կծկվեց: Դա իր գաղափարն էր: Ինքն էր առաջարկել, որ դուռը հանեին տեղից: Հիմա ինքը կանգնած էր ողջ դպրոցի առաջ: Տնօրենը բռնեց նրա ձեռքն ու տարավ դեպի բեմը:

– Շնորհավորում ենք: Ձեր դասարանը շահել

է գլխավոր մրցանակը՝ համակարգիչը: Ձեր լուսանկարն ամենակատարյալն էր:

Մեծ էկրանին հայտնվեց նրանց լուսանկարը: Գրեթե ոչինչ չէր երևում՝ բացի դռնից:

– Մենք ցանկանում ենք բացատրել, թե ինչու ենք ընտրել այս լուսանկարը: Ի՞նչ է Սուրբ Ծնունդը: Դա մսուրը, չոր խոտն ու ծղոտը չէ: Դա հովիվներն ու մոգերը չեն: Սուրբ Ծնունդը դուռ է: Աստված բացել է մեզ համար դուռը: Հիսուսի անձի միջոցով Նա իջել է երկիր մեզ՝ մարդկանց մոտ: Իսկ մնացած ամեն բան անիմաստ է: Սովորողների մեծամասնությունը մոռացել էր գլխավորը: Մյուս նկարներում երևում են մսուրը, Մարիամն ու Հովսեփը, մոգերը, հրեշտակներն ու գառները: Իսկ այ հաղթողների նկարում այդ ամենը երկրորդական է: Այդ ամենը դժվար է ճանաչել: Տեսնու՞մ եք: Միակ բանը, որ հստակ պատկերված է՝ դուռն է ու ձեռքը, որը բացում է այն:

– Դա իմ ձեռքն է, – կամացուկ ասաց Բերտան՝ թեթևության արցունքներն աչքերին:

– Ո՛չ, դա ասես Աստծո ձեռքն է: Նա մեզ համար դուռ է բացել: Նա մարդ է դարձել, որ ների այն ամենն, ինչ մենք արել ենք և Իր վրա վերցնի այդ ամենը, – ասաց տնօրենը, պտտվեց դասարանին և աչքով արեց: Այդպես 6 «Ա» դասարանը հաղթեց մրցույթում:



Նկ. Մարիսյա Ռուբակա

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԷՋ

Մեր ընթերցողները կիսվել են իրենց ստեղծագործություններով:
Գուցե դու ցանկանաս անգիր սովորել այս բանաստեղծություններից
մեկը և արտասանել այն եկեղեցում:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԳԻՇԵՐԸ

Ծննդյան գիշերն եկավ աննկատ,
Ողջ Բեթղեհեմը քնած էր խաղաղ,
Փոքրիկ աստղերի ցոլքերը պայծառ,
Ասես մի բան էին լուռ հուշում մարդկանց:

Բայց ի՞նչ էր պատահել այդ գիշեր,
Որ տպավորվել էր սրտերում հավետ,
Ի՞նչ էին հրեշտակները երգում երկնքից
Մեղքերի մեջ թաղված այս հին աշխարհին:

Այն գիշեր Մեսիան էր ծնվել այս երկրում,
Եվ լույս էր բերել աշխարհին ցավի ու տառապանքի,
Եվ հռչակում էր խումբը հրեշտակների,
Լավագույն լուրը բոլոր լուրերից:

Ո՞վ մարդիկ, եկե՛ք դեպ Հիսուս մանուկ
Նա կարող է մեղքերը սրտերից մաքրել,
Ո՞վ մարդիկ, զղջացե՛ք ու հավատացե՛ք,
Որ Ծննդյան գիշերը բացեք սրտի դռները:

Իրինա Լեսովոյ, 13 տ., Մոլդովա

ՕՎՍԱՆՆԱ՛ ԱՍՏԾՈՒՆ

Օվսաննա՛ Աստծուն, օվսաննա՛,
Որ Իր Որդուն է մեզ պարգևել Նա,
Օվսաննա՛, Աստծուն, օվսաննա՛,
Փա՛ռք Նրան Քրիստոսի համար:

Այնտեղ եղևնի ու նվեր չկար,
Այնտեղ Նվեր էր երկնքից տրված,
Օվսաննա՛ Աստծուն, օվսա՛ննա,
Աստծո Որդին ծնվել է բոլորիս համար:

Յանա Կովիլյակ, 10 տ., Մոլդովա

Բեթղեհեմում Սուրբ Ծնունդ է,
Ողջ աշխարհում ուրախ տոն է,
Մեզ համար ծնվել է արքայից Արքան,
Ողջ օրը Նրան երգում ենք մենք «փա՛ռք»:

Բենիամին Կոզուբ, 7 տ., Մոլդովա



***

Ծննդյան տոնին Հիսուս Քրիստոսի,
Փառք ենք տալիս Աստծուն ցնծում,
Նա մեզ սիրում է, պահպանում.
Հոգին խաղաղությամբ լցնում:
Իր անասելի մեծ սիրո համար,
Կյանքի պարգևի, հավատի համար,
Մենք գոհանում ենք, գովերգում Նրան,
Պիտ փառաբանենք երգով անդադար,
Նվերներ բերենք Նրան անհամար,
Այս հրաշալի օրը ծննդյան,
Չէ՞ որ Հիսուսն է կյանքը հավիտյան:

Վալենտինա Կոզուբ, 10 տ., Մոլդովա

***

Հիսուս Քրիստոս,
Որքան շատ բան կա այս մեկ անվան մեջ,
Որքան մաքրություն, բարություն ու սեր,
Նա խաչի վրա այնքան ցավ տարավ,
Տառապանք կրելով ինձ ու քեզ համար:
Նա բժշկում է մեզ, փրկություն շնորհում,
Բայց որքան դառնության է Աստված դիմանում,
Բայց մեզ խղճում է ու չի կործանում,
Միայն, որովհետև մեզ շատ է սիրում:
Խաչից հոսում էր արյունն Իր անմեղ,
Որն ազդարարում էր.
Աստված է լոկ սեր,
Աստված է լոկ սեր:

Յուլիա Օսիտնյաժսկայա, 11 տ., Ռուսաստան

Թարգմանեց Թամարա Լամբրիանովան

Իմաստի ինչ

Յուլիա Աբդուվախիդովա

Այն բույսի անունը, որի մասին ես ուզում եմ պատմել քեզ, հաճախ հիշատակվում է Աստվածաշնչում: Նրա մասին շատ է գրված Հին և Նոր Կտակարաններում:

Այս բույսից պատրաստվում են անհավանական շատ բազմատեսակ կերակրատեսակներ, անուշեղեններ և ըմպելիքներ: Վստահ եմ, որ դու շատ ես փորձել դրանք: Այն նաև պատկերում են նկարների, քանդակների, մետաղադրամների, շքանշանների և զինանշանների վրա: Այս բույսն աճեցնում են ողջ աշխարհում, բոլոր այն երկրներում, որտեղ շատ տաք կլիմա է:

Սա միակ բույսն է, որի ուսումնասիրությամբ զբաղվում է առանձին գիտություն՝ ամպելոգրաֆիան: Լատիներեն նրա անվանումն արտասանվում է որպես «vinifera»:

Այս բույսն իրենից ներկայացնում է թուփ, որից ողկույզներով կախվում են համեղ հատապտուղները: Թուփը կոչվում է որթ կամ վազ: Վազի երկարությունը կարող է հասնել 30-40 մետրի: Ճիշտ խնամքի դեպքում այն կարող է աճել ու պտղաբերել մինչև 150 տարի: Սլովենիայում մինչ օրս աճում է դրանցից ամենահինը:

Վազն ավարտվում է բեղիկներով, որոնք դանդաղ պտտվում են՝ երկու ժամում մի պտույտ կատարելով: Ճյուղը ևս պտտվում է, բայց շատ ավելի դանդաղ՝ 4 ժամում: Բեղիկները կառչում են հենարանից, փաթաթվում են դրան և ոլորվում: Դրանք շատ ամուր են: Բեղիկների օգնությամբ վազը կարող է պատի վրայով շատ վեր բարձրանալ՝ ընդունելով այն իրերի ձևը, որոնք որպես հենարան են ծառայում իրեն:

Այս բույսի տեսակների թիվն անհաշվելի է, քանի որ անընդհատ նորանոր տեսակներ են ստեղծվում, և բոլորն էլ իրարից տարբերվում են չափերով, համով և գույնով: Աշխարհում արդեն հաշվվում է այս բույսի ավելի քան 10 հազար տեսակ: Այդ թիվը գերազանցում է նույնիսկ խնձորի տեսակների թիվը, որն այդ ցուցանիշով առաջատարներից մեկն է: Այս բույսի պտուղների բոլոր տեսակները բաժանվում են 4 խմբի. սպիտակ, կարմիր, սև և վարդագույն:

Սովորաբար այս բույսի պտուղներում լինում է մեկից չորս կորիզ, թեև կան տեսակներ, որոնք ընդհանրապես կորիզ չունեն: Այդպիսի տեսակներն աճեցվում են հատուկ եղանակով:

Այս բույսի ոչ միայն պտուղներն են օգտակար, այլև տերևները: Դրանք դնում են բաց վերքերի և կտրվածքների վրա, որպեսզի կանգնեցնեն արյունը: Տերևներից նաև եփուկներ և թուրմեր են պատրաստում, որոնք օգնում են բուժել տարբեր հիվանդություններ:

Հույս ունեմ, որ դու արդեն հասկացել ես, թե ինչի մասին է խոսքը: Եթե ոչ, ապա հաջորդ հարցերն անկասկած կօգնեն քեզ, որ կռահես:

Հիշու՞մ ես, թե Նոյն ինչ տնկեց ջրհեղեղից հետո (Ծնն. 9.20):
Իսկ ի՞նչ բերեցին լրտեսները, երբ առաջին անգամ գնացել էին հետախուզման ավետյաց երկիր (Թվ. 13.24-25):
Իսկ հիշու՞մ ես, թե Հիսուսն ինչ անվանեց Իրեն, երբ խոսում էր աշակերտների ու Իր մասին (Հովհ. 15.1):

Իհարկե, դա շատ համեղ և օգտակար խաղողն է:

ԻՄ ՆՎԵՐԸ ՀԻՍՈՒՍԻՆ

Նկարի՛ր կամ գրի՛ր, թե դու ինչ կցանկանայիր նվիրել Հիսուսին՝ Իր ծննդյան օրը: Նրան թանկարժեք նվերներ պետք չեն: Դա պետք է լինի ինչ-որ հասարակ, բայց Իր համար շատ կարևոր մի բան. ժամանակ Իր հետ (աղոթել ամեն առավոտ և երեկո), օգնել մայրիկին լվանալ ափսեները կամ միշտ բարի լինել համադասարանցիների հետ:

սոսինձ քսել սոսինձ քսել սոսինձ քսել սոսինձ քսել սոսինձ քսել սոսինձ քսել սոսինձ քսել

Սիրով՝ _____

(այստեղ գրի՛ր անունդ)

Փաթեթավորի՛ր նվերդ. գունավոր թղթից կամ նվերի տուփից կտրի՛ր մեծ ուղղանկյան չափով մի կտոր: Ուղղանկյան վերևի շերտին սոսինձ քսի՛ր և թուղթը սոսնձի՛ր այնպես, որ կարողանաս բացել այն: Զարդարի՛ր այն ժապավենով կամ վարդակապով:

ՍՍՏՈՒԿ ՀԻՍՈՒՍԸ

ՍՈՒՐԲԾՆՆԴՅԱՆ ԽԱՉԲԱՌ



Կազմեց Անահիտ Սարգսյանը

1. Տաճարներ պատրաստող արծաթագործի անունը: /Գործ. Առ. 19.24
2. Ո՞ր քաղաքում էր դիվահարը պատմում Քրիստոսի մասին: /Մարկ. 5.20
3. Ո՞ւր ուղարկեց Տերը Սավուղին: /Գործ. Առ.22.10
4. Երեկոյան ո՞ւմ բերեցին Հիսուսի մոտ՝ բժշկության: /Մատթ. 8.16
5. Ո՞վ էր զաբուղոնացի Ելոնը: /Դատ. 12.11
6. Ի՞նչ տվեցին Հիսուսին հավաքված մարդիկ: /Մատթ. 22.19
7. Եվ Տիրոջ ----- Անգեն ասաց... /Անգե 1.13
8. Տիրոջ շնորհքն ու ողորմությունը գտած մարգարե: /Դան. 1.9

Սիրելի՛ ընկեր, անհամբերությամբ սպասում ենք Սուրբ Ծննդյան թեմայով քո նկարներին: Լավագույնները կդառնան շնորհավորական բացիկներ: Նկարները կարող ես ուղարկել մեր էլեկտրոնային հասցեին:

Մարիա Հովսեփյան 9տ., ք. Վանաձոր

Լիլի Մաշկարյան 12տ., ք. Վանաձոր

Արահետ 6/21 (24)

«ԼՈՒՅՍ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ» Բարեգործական հասարակական կազմակերպություն:
Մանկական քրիստոնեական ամսագիր:
Լույս է տեսնում տարեկան 6 անգամ:

Ռուսերեն ամսագիրը հրատարակվում է 1990թ. - ից:
Այն հրատարակվում է ռուսերեն, ուկրաիներեն, գերմաներեն, ղազախերեն, ղրղզերեն, բուլղարերեն, ռումիներեն և վրացերեն: 2018թ. - ից՝ նաև հայերեն:

Տպագրվում է կամավոր նվիրատվությունների միջոցով, բաժանվում է անվճար:

Գլխավոր խմբագիր՝ Վալդեմար Յորն

Հայկական ամսագրի գլխավոր խմբագիր՝ Նինա Կոստանյան
Ամսագրի աշխատակազմ՝ Անահիտ Սարգսյան, Թամարա Լամբրիանովա
Արփինե Մինասյան

Ամսագրին կարող եք բաժանորդագրվել
և ուղարկել նամակներ և նյութեր «Արահետ»
ամսագրի խմբագրություն՝ հետևյալ էլ. հասցեով
E-Mail. arahetarm@yandex.ru
Հեռ. +374 98 38 51 38

էջ 10-13. ©«Neih Wachten» © CLV Christliche Literatur-Verbreitung, Bielefeld, 2016
էջ 18-23. ©«Neih Wachten» © CLV Christliche Literatur-Verbreitung, Bielefeld, 2016
էջ 26-27. Լուսանկարը՝ © Sven Wilhelm / unsplash.com

Ռուսերենից թարգմանեց Թամարա Լամբրիանովան

Համակարգչային ձևավորումը՝ Դավիթ Հարությունյանի

Կազմի լուսանկարում՝ Նելլի Մուրադյան

Կրտսեր և միջին տարիքի դպրոցական երեխաների համար

Աստվածաշնչյան մեջբերումները վերցված են «ԱՐԱՐԱՏ» և «TBS» թարգմանություններից:

© «Լույս Արևելքում», 2021թ.

www.lio.ru/tropinka

Դասախաղեր

էջ 2. Հիսուս Քրիստոս:

էջ 14. 1. Ճիշտ է, 2. Սխալ է, 3. Սխալ է, 4. Ճիշտ է, 5. Ճիշտ է, 6. Սխալ է, 7. Ճիշտ է, 8. Սխալ է, 9. Ճիշտ է, 10. Ճիշտ է:

էջ 30. 1.Դեմետրիոս, 2. Դեկապոլիս, 3. Դամասկոս, 4. Դիվահար, 5. Դատավոր, 6. Դահեկան, 7. Դեսպան, 8. Դանիել:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Սերյոժա Մալցև, 8 տ., Ռուսաստան

Վալենտինա Կոզուբ, 10 տ., Մոլդովա



Ելենա Բոյկովա, 10 տ., Մոլդովա

Նաստյա Շիբաևա, 12 տ., Ռուսաստան

Ելիզավետա Սլաբայա, 8 տ., Մոլդովա

Իրինա Լեսովայա, 13 տ., Մոլդովա



Բենիամին Կոզուբ, 7 տ., Մոլդովա

Նիկիտա Տոպալա, Մոլդովա,

Տատյանա Կոզուբ, 10 տ., Մոլդովա

Ալեքսանդր Գաուրյակ, 9 տ., Մոլդովա

Անահիտ Գյուլազյան
12տ., ք. Սպիտակ

Թավիֆա Գրիգորեց, 10 տ., Մոլդովա,



Յանա Կովիլյակ, 10 տ., Մոլդովա

Անգելինա Բատիր, 11 տ., Մոլդովա

Նատալյա Բլատովչենայա, Մոլդովա

ԱՆՄԱՀԱԳԵԼԻ ՀԱՅՈՑՄԻՆ